

Կ-1225-02.09.2011-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երկաթուղային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-293-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասը ձանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 9-րդ և 25-րդ կետերում, 14-րդ հոդվածի 3-րդ մասում, 25-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ մասերում <երկաթուղիներ> բառը փոխարինել <երկաթուղային գծեր> բառերով՝ համապատասխան հոլովածներով:

2.1-ին մասի 24-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<Երկաթուղու օտարման շերտ (այսուհետ՝ օտարման շերտ)՝ երկաթուղային գծի հողապատարը և դրան հարակից հողամասերը, որոնք նախատեսված են երկաթուղային տրանսպորտի օբյեկտների տեղակայման համար:>:

3.1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 41-րդ, 42-րդ, 43-րդ և 44-րդ կետերով.

«41) երկաթուղային գծի հողապատար» (այսուհետ՝ հողապատար) երկաթուղային գծի համար հիմք ծառայող կառուցվածք, որն իր մեջ ներառում է հողաթումբը կամ փորվածքը, հողաթմբի հիմքի կամ փորվածքի եզրի կողմում առափներ ունեցող ջրահեռացման առուներն ու ապահովիչ շերտերը.

42) երկաթուղային կայարանի փակում՝ գնացքների ժամանման, մեկնման, կամ ուղեբեռների, բեռների կամ բեռնածանրոցների ընդունման, հանձնման, բեռնման, բեռնաթափման, տեսակավորման և (կամ) պահպանման (այդ թվում նաև՝ բեռնարկղերում) հետ կապված գործողության դադարեցումը:

43) երկաթուղային գծի փակում՝ երկաթուղային գծով ուղևորատար և բեռնատար գնացքների երթևեկության դադարեցումը:

44) երկաթուղային գիծ՝ ինժեներական կառույց, որը բաղկացած է ռելսերից, կոճերից, ռելսային ամրացումներից, բալաստային պրիզմայից և հողապատարից ու նախատեսված է երկաթուղային շարժակազմի երթևեկության համար:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր **6.1-րդ** կետով.

<6.1 երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպման և իրականացման կարգի հաստատում:>:

Հոդված 4. Օրենքի 20-րդ հոդվածի՝

1.6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<6. Ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի, երկաթուղային կայարանների փակումն և ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի անցումը ոչ ընդհանուր օգտագործման գծերի՝ իրականացվում է լիազոր մարմնի առաջարկության հիման վրա՝ կառավարության կողմից:

2.10-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 5. Օրենքի 25-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մասով.

«10. Երկաթուղային տրանսպորտում տրանսպորտային պատահարների և երկաթուղային տրանսպորտի շահագործման և երթևեկության անվտանգության կանոնների խախտման հետ կապված միջադեպերի ծառայողական քննության և հաշվառման կարգերը սահմանում է լիազոր մարմինը:»:

Հոդված 6. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1 գլխով.

«ԳԼՈՒԽ 2.1

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՕՏԱՐՄԱՆ ՇԵՐՏԵՐԻ ԶԱՓԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 15.1 Երկաթուղու օտարման շերտերի չափերի և պաշտպանական գոտիների սահմանման կարգը

1. Օտարման շերտի չափերը սահմանվում են կառավարության կողմից հաստատված նորմերի հիման վրա մշակված ճարտարապետաշինարարական նախագծերով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ մասում նշված հողապաստառի չափերը:

2. Կայարանամիջյան երկաթուղային գծերի տեղակայման համար հատկացվող հողամասի լայնությունը սահմանվում է համաձայն հավելվածի:

3. Հողաթմբի բարձրությունը կամ փորվածքի խորությունը 12,0 մետր գերազանցելու, կամ հողապաստառի լայնական կտրվածքի չափերը համապատասխան շինարարական նորմով սահմանված չափերից տարբերվելու, կամ հողաթումբը բլրաշատ ու լեռնային ռելիեֆի կամ թույլ գրունտների վրա տեղադրվելու դեպքերում հողապաստառի լայնությունը սահմանվում է լիազոր մարմնի կողմից՝ համաձայնեցնելով քաղաքաշինության բնագավառի կառավարության պետական լիազորված մարմնի հետ:

4. Երկու և ավելի երկաթուղային գծերի տեղակայման դեպքում նախատեսվող հողամասի լայնությունը յուրաքանչյուր հաջորդ երկաթուղային գծի համար սահմանվում է սույն հոդվածի 2-րդ մասում բերված չափերից 4,0 մետր ավելի չափով:

5. Հողապաստառի երկարությամբ հողաշերտի սահքը պահող հողամրացուցիչ և այլ տեսակի ծառատնկումներ կատարելու, անտառի եզրից մինչև օտարման շերտի սահմանը բաժանարար շերտ ստեղծելու,

կայարանամիջյան երկաթուղային գծերի օտարման շերտերում ծյունապահ անտառատնկումներ կատարելու, փորվածքների լայնական մշակման դեպքում հողակույտերի դիզում կատարելու կամ մշտական ծյունապահ ցանկապատներ տեղադրելու անհրաժեշտության դեպքերում՝ երկաթուղային գծերի տեղակայման համար նախատեսվող օտարման շերտի լայնությունը սահմանվում է լիազոր մարմնի կողմից հաստատված նորմերի պահանջներին համապատասխան:

6. Արհեստական կառույցների (կամրջային անցումների, թունելների) տեղաբաշխման վայրերում օտարման շերտի լայնությունը սահմանվում է ճարտարապետաշինարարական նախագծերով:

7. Երկաթուղու պաշտպանական գոտիները չեն մտնում օտարման շերտի մեջ և նախագծվում են օտարման շերտի նախագծման հետ միաժամանակ:

8. Օտարման շերտի երկայնությամբ տեղաբաշխված հողամասերը (դրանց մասերը) երկաթուղու պաշտպանական գոտիների սահմաններում ընդգրկվում են այն դեպքում, երբ երկաթուղային գծերը անցնում են.

1) ձնահյուսերի, փլուզումների, ողողումների, հեղեղումների, հեղեղատների առաջացման կամ վտանգավոր երկրաբանական ազդեցությունների ենթարկվող վայրերով.

2) պաշտպանիչ անտառատնկվածքների դեր կատարող անտառներով, այդ թվում գետերի ողողահունքներում կամ մակերեսային ջրային օբյեկտների երկարությամբ առկա անտառներով.

3) անտառներով, որտեղ ծառերի համատարած հատումը կարող է ազդել սարերի և բլուրների թեքությունների կայունության վրա կամ հանգեցնել փլուզումների, փլվածքների, կամ հեղեղատների առաջացմանը կամ հանգեցնել հեղեղումների և ձնահյուսերի երևան գալուն, կամ ազդել երկաթուղու պահպանվածության, կայունության կամ ամրության վրա:

9. Երկաթուղային գծի յուրաքանչյուր կողմում երկաթուղու պաշտպանական գոտու արտաքին սահմանագծի հեռավորությունը երկաթուղային գծի առանցքից սահմանվում է 50 մետրից ոչ պակաս:

10. Երկաթուղու պաշտպանական գոտու չափերը, երկաթուղու պաշտպանական գոտում քաղաքաշինական գործունեություն իրականացնելու կարգը սահմանում է կառավարությունը:

Հոդված 15.2 Երկաթուղու օտարման շերտերի օգտագործման կարգը

1. Երկաթուղային տրանսպորտի երթևեկության և շահագործման անվտանգության ապահովման նպատակով օտարման շերտերի սահմաններում արգելվում է.

1) կապիտալ շենքերի-շինությունների, բազմամյա տնկարկների (արհեստական ծառերի) տեղակայումը.

2) անտառային զանգվածներին հարող վայրերում ցցաչոր ծառերի, թփերի, կամ գետնին ընկած չորացած ծառերի ոստերի, խշուրների, կամ հատված մնացորդների կամ այլ դյուրավառ նյութերի կուտակումը.

3) գյուղատնտեսական նշանակության հողերին հարող վայրերում մոլախոտային կամ փայտաթփային բուսականության կուտակումը:

2. Երկաթուղային տրանսպորտի երթևեկության և շահագործման անվտանգության պահանջների պահպանմամբ օտարման շերտերի սահմաններում հաղորդակցուղիների տեղադրումը լիազոր մարմնի համաձայնությամբ թույլատրում է ենթակառուցվածքի կառավարչը (ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի սեփականատերը): Հաղորդակցուղիների տեղադրման համաձայնեցման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

3. Հաղորդակցուղիների համաձայնեցման կարգի պահանջների խախտման համար պատասխանատվությունը կրում է երթակառուցվածի կառավարիչը:

4. Օտարման շերտի սահմաններում տեղադրված հաղորդակցուղիների անսարքության պատճառով տեղի ունեցած տրանսպորտային պատահարների համար պատասխանատվությունը կրում է ենթակառուցվածի կառավարիչը:

Հոդված 15.3 Երկաթուղու պաշտպանական գոտիների օգտագործման կարգը

1. Երկաթուղային տրանսպորտի երթևեկության և շահագործման անվտանգության ապահովման նպատակով երկաթուղու պաշտպանական գոտիների սահմաններում արգելվում է.

- 1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված նորմերի խախտմամբ՝ կապիտալ շենքերի և շինությունների շինարարությունը, կամ ժամանակավոր ճանապարհների կառուցումը,
- 2) *ծառաթփուտային* բուսականության հատումը, կամ ճիմե ծածկույթի հեռացումը,
- 3) այնպիսի աշխատանքների կատարումը, որոնց հետևանքով պաշտպանական գոտիների հողերում կարող են առաջանալ հիդրոլոգիական ռեժիմի անբարենպաստ փոփոխություններ կամ ռելիեֆի տարրերի կայունության խախտում (սողանքներ, լանջերի փլվածքներ, ձորակներ, լճակներ կամ հողերի ճահճացում).

2. Երկաթուղու պաշտպանական գոտիների սահմանները և կիրառվող սահմանափակումները ցույց տվող նշանները տեղակայում է ենթակառուցվածքի կառավարչը (ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի սեփականատերը):

»

Հոդված 7. Օրենքը լրացնել հավելվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

Հավելված
 <Երկաթուղային տրանսպորտի
 մասին>
 Հայաստանի Հանրապետության
 օրենքի

Աղյուսակ 1

Միագիծ երկաթուղային գծի հողապատահի լայնությունը՝ մինչև 12 մ. բարձրությամբ
 հողաթմբի համար
 (հողաթմբի հիմքի եզրից՝ 2 մ., ջրահեռացման առունների եզրից՝ 1մ ապահովվիչ
 շերտերի առկայության դեպքում)

№	Հողաթմբի բարձրու- թյունը (մետր)	Երկաթուղային գծեր					
		I, II, III կարգի			IV կարգի		
		տեղանքի լայնական թեքության դեպքում					
		մինչև 1:25	մինչև 1:10	մինչև 1:5	մինչև 1:25	մինչև 1:10	մինչև 1:5
1	1	24	21	23	23	20	22
2	2	27	24	26	26	23	25
3	3	21	27	29	20	26	28
4	4	24	30	33	23	29	32
5	5	27	33	37	26	32	36
6	6	30	37	41	29	36	40
7	7	34	40	45	33	39	44
8	8	38	44	49	37	43	48
9	9	41	48	-	40	47	-
10	10	45	52	-	44	51	-
11	11	48	-	-	47	-	-
12	12	52	-	-	51	-	-

Աղյուսակ 2

Միագիծ երկաթուղային գծի հողապատահի լայնությունը՝ մինչև 12 մ. խորությամբ
 փորվածքի համար
 (փորվածքի եզրից՝ 2 մ., ջրահեռացման առունների եզրից՝ 1մ ապահովվիչ շերտերի
 առկայության դեպքում)

№	Հողաթմբի բարձրու- թյունը (մետր)	Երկաթուղային գծեր					
		I, II, III կարգի			IV կարգի		
		տեղանքի լայնական թեքության դեպքում					
		մինչև 1:10	մինչև 1:5	մինչև 1:3	մինչև 1:10	մինչև 1:5	մինչև 1:3
1	1	26	29	34	25	28	33
2	2	29	32	38	28	31	37
3	3	32	35	42	31	34	41
4	4	35	38	46	34	37	45
5	5	38	41	50	37	40	49
6	6	41	45	54	40	44	53
7	7	44	48	-	43	47	-
8	8	47	50	-	46	49	-
9	9	50	-	-	49	-	-
10	10	54	-	-	53	-	-

11	11	57	-	-	56	-	-
12	12	60	-	-	59	-	-

Հոդված 8. Անցումային դրույթներ

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 15.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և 15.3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումները տարածվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կառուցված երկաթուղային գծերի օտարման շերտի և պաշտպանական գոտու չափերը սահմանվում են սույն օրենքի պահանջներին համապատասխան այդ տարածքներում չներառելով երկաթուղային գծի եզրային գծի առանցքից 3.8 մետր և ավելի հետավորության վրա գտնվող, այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերը, ինչպես նաև օրինական հիմունքներով կառուցված շենք-շինություններով զբաղեցված և այդ շենք-շինությունների օգտագործման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ Ի Կ

Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Երկաթուղային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկությունների

N	Առարկության, առաջարկության հեղինակը	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Լ.Ալավերդյան և Ս.Սաֆարյան	«Երկաթուղային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածում «8-րդ» և «8)» բառերի փոխարեն գրել «6.1-րդ» և «6.1)» բառերը:	Ընդունվել է, նախագծի 5-րդ հոդվածում (ներկայիս 3-րդ հոդվածում) փոփոխությունը կատարված է:
2	ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ Հ. Նաղդալյան	<p>1.Ներկայացված նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված է գործող օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր բովանդակությամբ՝ 41-րդ, 42-րդ, 43-րդ և 44-րդ կետերով: Մասնավորապես, 42-րդ, 43-րդ կետերով նախատեսվում է.</p> <p>42) երկաթուղային կայարանի փակում-գնացքների ընդունման կամ մեկնման կամ ուղևորների փոխադրման կամ բեռների, ուղեբեռների կամ բեռնաձանրոցների ընդունման, բեռնման կամ բեռնաթափման հետ կապված բոլոր կամ յուրաքանչյուր գործողության չկատարումը:</p> <p>43)երկաթուղային գծի փակում՝ երկաթուղային գծով ուղևորատար կամ բեռնատար գնացքների երթևեկության դադարեցումը:</p> <p>Գործող օրենքի 3-րդ հոդվածը վերաբերվում է օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններին և այդ հոդվածը բաղկացած չէ մասերի, այլ ուղղակի դրանում կետերով թվարկվում են հասկացությունները: Այդ կապակցությամբ առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածում «Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը» բառակապակցությունը փոխարինել «Օրենքի 3-րդ հոդվածը» բառակապակցությամբ:</p>	<p>Չի ընդունվել :</p> <p>«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի, ՀՀ օրենքների հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի:</p> <p>Գործող օրենքի 3-րդ հոդվածը բաղկացած է մեկ մասից, որը իր հերթին բաժանված է կետերի:</p>

		<p>2.Նախագծի 2-րդ հոդվածի 42-րդ, 43-րդ կետերը վերաբերում են երկաթուղային կայանի և երկաթուղային գծի փակման հասկացությանը, և երկուսն էլ արտահայտում են գործողությունների բովանդակությամբ միևնույն միտքը: Սակայն, ներկայացված հասկացությունների վերջում մի դեպքում կիրառվում է <չկատարում>, իսկ մեկ այլ դեպքում՝ <դադարեցում> բառերը: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի՝ նորմատիվ-իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը: Ուստի առաջարկվում է երկու դեպքում էլ կիրառել «դադարեցում» բառը:</p>	<p>Ընդունվել է : Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված <երկաթուղային կայանի փակում> հասկացության մեջ <չկատարումը> բառը փոխարինվել է <դադարեցումը> բառով</p>
		<p>3.Նախագծի 2-րդ հոդվածի 42-րդ կետում սահմանված «երկաթուղային կայարանի փակում» հասկացությունը կարծում ենք թերի է ներկայացված: Համաձայն գործող օրենքի 20-րդ հոդվածի 10-րդ կետի՝ գնացքների ժամանման և մեկնման, ուղեբեռների, բեռների և բեռնաձանրոցների ընդունման, հանձնման, բեռնման, բեռնաթափման, տեսակավորման, պահպանման (այդ թվում նաև՝ բեռնարկղերում) հետ կապված բոլոր կամ որոշ գործողությունների իրականացման նպատակով երկաթուղային կայարանների փակումն իրականացվում է կառավարության թույլտվությամբ: Այստեղից ենթադրվում է, որ երկաթուղային կայանի փակումը կարող է իրականացվել բացառիկ դեպքերում՝ անձի, հասարակության և պետության անվտանգության ապահովման համար հատուկ գործողությունների կատարման նպատակով, ինչպես նաև երկաթուղային կայանի հետագա շահագործման աննպատակահարմարության դեպքում: Երկաթուղային կայանի փակումը չի կարող ներառել առանձին</p>	<p>Ընդունվել է : Նախագծի 2-րդ հոդվածում նախատեսված երկաթուղային կայարանի հասկացության մեջ «բոլոր կամ յուրաքանչյուր գործողության չկատարումը» բառերը փոխարինվել են «գործողությունների դադարեցումը» բառերով:</p>

		<p>Ենթակառուցվածքի գործողության դադարեցում, ինչպես ներկայացված է նախագծի 4-րդ հոդվածով նախատեսված 42-րդ կետում, այլ այն պետք է ներառի երկաթուղային կայանի ենթակառուցվածքների կողմից իրականացվող ընդհանուր բնույթի գործողությունների (ծառայությունների մատուցման) դադարեցում:</p> <p>Վերը նշվածի հիման վրա առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածով նախատեսված 42-րդ կետի վերջում «բոլոր կամ յուրաքանչյուր գործողության չկատարումը» բառակապակցությունը փոխարինել «գործողությունների դադարեցումը» բառերով:</p>	
		<p>Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված 43-րդ կետով սահմանված է «երկաթուղային գծի փակում» հասկացությունը, այն է՝ երկաթուղային գծի փակում՝ երկաթուղային գծով ուղևորատար կամ բեռնատար գնացքների երթևեկության դադարեցումը: Այստեղ նույնպես նկատելի են հետևյալ թերությունները: Նախ գործող օրենքի 3-րդ հոդվածում չի տրված «երկաթուղային գիծ» հասկացությունը: Սակայն գործող օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասում նախատեսվում է ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի փակումը: Այս իսկ կապակցությամբ ենթադրվում է, որ նախագծի 4-րդ հոդվածով նախատեսված 42-րդ կետը վերաբերվում է ոչ թե առանձին գծին, այլ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծին:</p> <p>Միաժամանակ հասկացությունը չի կարելի լիարժեք համարել, քանզի համաձայն գործող օրենքի վերը նշված դրույթի՝ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծի փակումն իր մեջ պետք է ներառի ուղևորատար և բեռնատար գնացքների երթևեկության դադարեցում, այլ ոչ թե դրանցից որևէ մեկի երթևեկության դադարեցում:</p> <p>Վերագրյալի հիման վրա առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածով նախատեսված 43-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ . «42) Ընդհանուր</p>	<p>Ընդունվել է մասնակի: «Երկաթուղային գիծ» հասկացության սահմանումը տրված է նախագծի 2-րդ հոդվածում: Նախագծի 2-րդ հոդվածում նախատեսված երկաթուղային կայարանի հասկացությունը խմբագրվել է, համաձայն որի. «երկաթուղային գծի փակում՝ երկաթուղային գծով ուղևորատար և բեռնատար գնացքների երթևեկության դադարեցումը»</p>

		<p>օգտագործման երկաթուղային գծի փակում՝ նշված երկաթուղային գծով ուղևորատար և բեռնատար գնացքների երևելության դադարեցում »</p>	
3	<p>ՀՀ կառավարություն</p>	<p>1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով օրենսգրքում լրացվող 137.5-րդ հոդվածի 3-րդ մասը «Գյուղատնտեսական» բառից առաջ լրացնել «Երկաթուղու օտարման շերտի սահմաններում» բառերը՝ նկատի ունենալով, որ վարչական իրավախախտում կհամարվի ոչ թե ընդհանրապես գյուղատնտեսական նշանակության հողերին հարող վայրերում մոլախոտային կամ փայտաթփային բուսականության կուտակումը, այլ նույն գործողության կատարումը երկաթուղու օտարման շերտի սահմաններում: Նույն լրացումը առաջարկվում է կատարելու նույն հոդվածի 2-րդ մասում «Անտառային» բառից առաջ:</p>	<p>1. Ընդունվել է, լրացումը կատարված է :</p>
6		<p>2. «Երկաթուղային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածներն անհրաժեշտ է միավորել մեկ հոդվածի ներքո, քանի որ հիշյալ հոդվածներով նախատեսվող փոփոխությունները և լրացումը վերաբերում են օրենքի միևնույն հոդվածին:</p> <p>3. Նախագծում անհրաժեշտ է փոփոխություններ և լրացումներ կատարել՝ պահպանելով «Երկաթուղային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածների հերթականությունը:</p>	<p>2. Ընդունվել է , նախագծի 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածները միավորվել են :</p> <p>3. Ընդունվել է: Նախագծի 3-րդ հոդվածում (ներկայիս խմբագրությամբ) «8-րդ» և «8» թվերը փոխարինվել են «6.1-րդ» և «6.1») թվերով</p>

		<p>4. Նախագծի 15.3-րդ հոդվածում անհրաժեշտ է «ծառա և թփուտային» բառերը փոխարինել «ծառաթփուտային» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի պահանջների:</p> <p>5. Նախագծի 10-րդ հոդվածում անհրաժեշտ է «հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից» բառերը փոխարինել «հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:</p> <p>Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին</p>	<p>4.Ընդունվել է, փոփոխությունը կատարված է</p> <p>5.Ընդունվել է, փոփոխությունը կատարված է</p>
--	--	--	---